

ՄԻԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

1967 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

●●●●●●●●●●●●●●●●

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Հոգեշնորհ Հայր Սուրբ,

Պատուարժան Դիւան եւ մեծայարգ անդամներ,

Ահա՛ այսօր Մոնթրէալի Հայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Միական Խորհուրդս տարի մը եւս բոլորած ձեզի կը ներկայանայ տալու իր տարուայ մը գործունէութեան բարոյական ամփոփ տեղեկատուութիւնը :

Միական Խորհուրդս իր այս տարեշրջանին չգործեց հրաշքներ եւ ոչ ալ իրականացուց տեսիլքներ կամ ներգոյններ, բայց ձեզ կրնանք վստահացնել թէ ան ունենալով ձեր աշակցութիւնը, որրաւ այն ինչ որ վստահուած էր իրեն : Տրամադրեց իր ժամանակը, գործեց թեմիս կանոնադրութեանց սահմաններուն համաձայն եւ աշխատեցաւ համերաշխութեամբ ի շահ եւ ի պայծառութիւն Մոնթրէալի Հայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ :

Յարգելի անդամներ, անշուշտ պիտի չկարենայինք ձեզի մանրամասնութիւններ տալ այն բոլոր հարցերուն մասին զոր Միական Խորհուրդս դիմադրուեց, ուսումնասիրեց, որոշումներ տուաւ եւ գործեց իր տարուայ մը ընթացքին գումարած ժողովներուն մէջ :

Այսու կը շնանք ձեզի ներկայացնել Հայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Միական Խորհուրդիս 1967 տարեշրջանի բարոյական ամփոփ տեղեկատուութիւնը :

Միական Խորհուրդս այս տարեշրջանին գումարեց 44 շաբաթական եւ 4 անդամական ընդհանուր ժողովներ : Միական Խորհուրդս իր առաջին նիստին կազմեց իր ղիւանը հետեւեալ կերպով :

- | | |
|--------------|--------------|
| Յ. ԲԷՍՐԷՔԵԱՆ | Ատենապետ |
| Ա. ՄԱՐՏԻԿԵԱՆ | Ատենադպիր |
| Վ. ՊԱՐՈՆ | Գանձապետ |
| Ժ. ՏԷՐՎԻՇԵԱՆ | Փոխ ատենապետ |
| Ղ. ՊԱԼՔԱՃԵԱՆ | Հաշուակալ |
| Ա. ԿԷՅՆՃԵԱՆ | Խորհրդատու |
| Յ. ԳՈՃՈՅԵԱՆ | Խորհրդատու |

Ի մտի ունենալով գաղութիս շահերն ու Հայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ փառքն ու պատիւը ան չխնայեց իր շնորհքը վերջ տալու անցեալի մէջ ծագած այն տարակարծութիւններուն եւ անհամաձայնութիւններուն որոնք կրնային արգելք հանդիսանալ համայնքիս բարգաւաճման : Այս ուղղութեամբ Միակն խորհուրդիս թափած շնորհքը դժբախտաբար ապարդիւն մնացին : Համոզուած էինք թէ այս համերաշխութեան միակ լուծումը կը կարժտէր Գիտարարութեան ժամանակի, բայց այսօր տարի մը վերջ այն անձերը որոնք հեռու մնացին Հայ Շէնքէն, ազգային գործունէութիւններէ եւ եկեղեցիէս, ուր սակայն աշխատած, մրտահոգուած, հետաքրքրուած եւ ուրախացած էին Մոնթրէալի գաղութիս գործունէութեամբ, ներքին ջանքերով նշանաբանով վստահ ենք թէ անոնք, այդ անձերը, պիտի վերադառնան մեր մէջ եւ մենք նորէն, ինչպէս անցեալին, սիրով եւ համերաշխութեամբ պիտի հաշտուինք մեր մտերմիկ բոյնը, քանի որ բոլորս ալ կը հաւատանք Հայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ միասնականութեան եւ անբաժանելիութեան ու երկիւղածութեամբ ու յարգանքով կը խոնարհինք Ս. Էջմիածնի Վեհափառ Հայրապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. ի առջեւ :

Այս շրջանին խորհուրդս ստիպուած եղաւ պաշտօնէ դադարեցնել Միակն խորհուրդիս քանձապետ Պր. Վ. Պարոնը, եկեղեցւոյս դրամէն 1277 տոլարի գումար մը իւրացուցած ըլլալուն համար :

28 Օգոստոս 1967, Անդամական Ընդհանուր ժողովիս որոշմամբ Պր. Վ. Պարոն յանձնուեցաւ դատախազութեան : Միակն խորհուրդս 1 Նոյեմբեր 1967 թուականին Պր. Վ. Պարոնէն ստացաւ 390 տոլար իսկ 10 Յունուար 1968ին իր փաստաբանին միջոցաւ ոչ Օրուան թուականով 12 չէքեր, վճարելի մինչեւ 1968 տարեշրջանի վերջը, այսինքն 885 տոլար որոնք կ, ամբողջացնեն եկեղեցւոյս սնտուկէն իր իւրացուցած գումարը :

Միակն խորհուրդս, հրաժարեցուած Պր. Վ. Պարոնի եւ քաղաքէս մեկնելուն պատճառաւ հրաժարականը ներկայացուցած հաշուական Պր. Վ. Պալթանի տեղ խորհուրդիս անդամ ընտրեցեցան Պր. Ս. Թովմալեան եւ Ս. Կուտսուզեան :

ԱՊՐԻԼ 24Ի ՆԱՀԱՏԱԿԱՑ ՏՕՆԸ

24 Ապրիլի նահատակաց տօնակատարութիւնը գաղութիս երեք համայնքներուն մասնակցութեամբ միասնաբար տօնելու համար խորհուրդիս եղած առաջարկը ներկայացուցած ենք Առաջնորդ Կերթ. Տ. Թորոնթ Եպս. Մանուկեանի եւ անոր հաւանութիւնը առնելով մասնակցած ենք այն տօնակատարութեան : Միակն խորհուրդս, այս առթիւ կազմուած մարմնի հոգ. Հայր Սուրբին նախագահութեամբ ներկայացուցիչ նշանակած է Պր. Ալպէր Մարտիկեանը եւ Տոքթ. Ա. Կէթնեանը :

Հակառակ Միակն խորհուրդիս ներկայացուցիչներուն քախնդիր աշխատանքին, Միակն խորհուրդս ձեր ուշադրութեան կը յանձնէ թէ տօնակատարութեան ընթացքին երկու Կաթողիկոսները յիշուած են պարզապէս իրենց անուն ներով եւ ոչ տիտղոսներով :

ԵԿԵՂԵՑԻՈՑՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՐԳՁԱԽՈՒՄԲԸ ՄՈՆԹՐԷԱԼԻ

67Ի ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՄՆ ՄԷՁ

Անցեալ Միակն խորհուրդի Օրով Մոնթրէալի 1967ի Միջազգային

Յուզահանդէսին մէջ ելոյթ ունենալու նպատակաւ եղած կարգադրութեամբ, քաղաքս հրաւիրուեցաւ համբաւաւոր երաժշտագէտ Պր. Համբարձում Պէրպէրեանը: Այս առթիւ Միսկան Խորհուրդս կուգայ իր շնորհակալութիւնները յայտնել Պր. Հ. Պէրպէրեանի, որ կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին կարողացաւ կազմակերպել երգչախումբ մը որուն փայլուն եւ գնահատելի ելոյթը 30 Յուլիս 1967, Յուզահանդէսին մէջ, ոչ միայն գաղութիս պարֆանքը հանդիսացաւ, այլ նաեւ անգամ մը եւս փաստեց մեր ազգին գոյութիւնը, արժէքը եւ զմայլելի արուեստը: Միսկան Խորհուրդս իր շնորհակալութիւնները կը յայտնէ նաեւ Թէքէեան Մշակոյթային Միութեան որ իր մեծ աջակցութիւնը բերած է Պէրպէրեան երգչախումբի կազմակերպութեան եւ նիւթականը հայթայթելու գործին մէջ:

ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Մայիս 5, 6 եւ 7, Տիթրոյթի մէջ տեղի ունեցած Պատգամաւորական ժողովին, Մոնթրէալի Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ ներկայացուցիչները եղած են հոգ. Տ. Վազգէն վրդ. Թադոյեան եւ Պր. Յ. Բէսթէքեան:

1967Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻՒ ՄԱՅՐ

ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ԺԱՄԱՆԱԾ ՀԻՒՐԵՐ

Անմոռանալի տարի մը եղաւ 1967 մոնթրէալահայութեան համար: Եւ արդարեւ, Մոնթրէալի Համաշխարհային Ցուցահանդէսին առիթով համայնքս պատիւն ունեցաւ ծանօթանալու հայրենիքի իր մեծայարգ հիւրերուն: 9 Մայիս 1967 քաղաքս այցելեց սփիւռքահայութեան հետ մշակութային կապի Կոմիտէի անդամներէն եւ ԳԱՐՈՒՆ ամսաթերթի խմբագիր Տիար Վարդգէս Պետրոսեանը: Միսկան Խորհուրդս Պր. Պետրոսեանի ի պատիւ սարքած հաւաքոյթին հիացումով ունկնդրեցինք զինք երբ ան լայն եւ բծախնդիր մանրամասնութիւններով տեղեկութիւններ կուտար մայր հայրենիքի նուաճումներուն մասին:

27 Մայիս 1967, մոնթրէալահայութիւնը բախտն ունեցաւ լսելու մեր բոլորին հոգիներուն խօսող Հայաստանի Սոխակը, Գոհար Գասպարեանը:

Հայրենիքի հռչակաւոր երգչուհին, Գոհար Գասպարեանի, համերգը տեղի ունեցաւ Քլոտ Շամբաներ սրահին մէջ եւ որուն հասոյթը յատկացուեցաւ Նիւ Եորքի Մայր Տաճարին շինութեան:

7 Օգոստոս 1967, Միսկան Խորհուրդս դիմաւորեց Հայրենիքի արժէքաւոր մտաւորականներէն, Երեւանի պետական համալսարանի պատմութեան փրոֆ. սոր եւ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի Կոմիտէի նախագահ Վարդգէս Համազասպեանը: 10 Օգոստոս 1967 երեկոյեան, ան շէնքիս մէջ հանդիպում ունեցաւ Մոնթրէալի համայնքիս բոլոր կազմակերպութիւններուն, միութիւններուն եւ յանձնախումբերուն հետ: Այս հաւաքոյթին ներկայ էին նաեւ Հայաստանի ակադեմիկոսներէն եւ Վիթոր Համբարձումեանի տեղապահ Տիար Սեթէյ Սկրտիչեանը եւ պատմաբան Տիար Անաթոլ Սկրտիչեանը:

11 Օգոստոս 1967, Ուրբաթ երեկոյ, ութընական սրահին մէջ ի պատիւ Պր. Համազասպեանի, Հայց. Առաքելական Ս. Եկեղեցւոյ հովանաւորութեամբ եւ համայնքիս բոլոր միութիւններուն եւ յանձնախումբերուն կազմակերպութեամբ, ընդունելութիւն մը սարքուեցաւ:

Յարգելի անդամներ, Միական Խորհուրդն ոսկի գիրքերով կ'արձանագրե
իր 1967 Քարոյական Տարեկան տեղեկատուութեան մէջ, Հայաստանի վարչապետ
Քաղալ Մուրատեանի եւ իր պատուիրակութեան այցը ի քաղաքս Մոնթրէալ :

Մայիս 16էն Մայիս 20 Սովետական տաղաւարին մէջ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԱԲԱԹ
հռչակուած էր եւ այս առիթով քաղաքս կը ժամանէին Հայաստանի վարչապետը
եւ իր պատուիրակութիւնը :

Մայիս 15, 1967, Երկուշաբթի կ'վ. ժամը 5, 15ին Հայաստանի վարչապետ
Քաղալ Մուրատեան եւ իր պատուիրակութիւնը հասան քաղաքիս Տորվալ Յոլա
նաւակայանը :

Պատուիրակութեան մաս կը կազմէին մեր Երեւանի քաղաքապետ Տիար
Հասրէթեանը, Խորհրդարանի անդամ Տիար Արզումանեանը, գիտնականներ, մտաւո
րականներ եւ արուեստագէտներ :

Մոնթրէալահայ գաղութս շերմօրէն դիմաւորեց վարչապետը եւ իր պատ
ւիրակութիւնը :

Միական Խորհուրդն երեկոյթ մը սարքեց ի պատիւ Հայաստանի վարչա
պետին եւ իր պատուիրակութեան: 19 Մայիս 1967, Ուրբաթ, երեկոյեան ժամը
9, 30ին Թաուըն Թե Մաունթ Բուեալի քաղաքապետարանի շքեղ սրահներուն մէջ,
հո՞ թազմութեան մը ներկայութեան, անգամ մը եւս լսելի կ'ըլլար վարչապե
տին տպաւորիչ ձայնը :

Մայիս 22, Երկուշաբթի կ'վ. հո՞ թազմութիւն մը բարի ճանապարհ կը
մաղթէր վարչապետին եւ իր պատուիրակութեան, Տորվալի Յոլանաւակայանը :

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿԻՐԱԿՆՅՈՐԵԱՅ ԶՈՅԳ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐ

Ազգային եւ Կիրակնօրեայ զոյգ վարժարաններու 1967-68 տարեշրջանի
աւարտման հանդէսը տեղի ունեցաւ 11 Յունիս 1967 ութրանական սրահին մէջ :

Միական Խորհուրդն կուգայ իր խորին շնորհակալութիւնները յայտնել
Ազգային եւ Կիրակնօրեայ վարժարաններու Տնօրէն Խորհուրդներուն իրենց
տարած ազգանուէր գործունէութեանց համար :

Նկատի ունենալով Ազգային եւ Կիրակնօրեայ վարժարաններուս աշակեր
տութեան թիւը եւ ՀԱՅ ՏՈՒՅԻ անյարմարութիւնը, Միական Խորհուրդն երկար
խորհրդակցութիւններէ յետոյ որոշեց 1967-1968 տարեշրջանի համար վարձել
Քոմիսիոն Քաթուիթ տէ գ, էթոլ տը Մոնթրէալի պատկանող Մաթըր Սեթըն դպրոցը :
Խորհուրդն յարմար դատեց նաեւ ունենալ Խնամակալ Մարմին մը եւ այս առնչու
թեամբ պաշտօնի հրահրեց Պրն. Վ. Ալթուլեանը, Հ. Միսաքեանը, Տոթթ. Արթթ
Տէմիրճեանը, Ա. Կոչումուզեանը, Տիկնթ. է. Աքթիպրիթեանը, Ա. Միրոյեանը, Ա. Թովա
լեանը եւ Թր. Ն. Գըլճեանը :

Միական Խորհուրդն կուգայ իր շնորհակալութիւնները յայտնել վերո
յիշեալ ազգայիններուն, որ սիրով ընդունած են Ազգային վարժարանիս խնամա
կալութեան հոգատարութիւնը :

Ունենալով Խնամակալ Մարմնի 1967-68 տարեշրջանի համար պատրաստ
ւած նախահաշիւը Ազգային վարժարանիս վերաբերեալ, Միական Խորհուրդն
Հ. Բ. Ը. Միութեան Մոնթրէալի մասնաճիւղին միջոցաւ Կեդրոնական վարչութեան,

պիւտեճի 3600 տոլար նախատեսուած պակասը ապահովելու նպատակաւ, եւ վստահ ենք թէ Հ.Բ.Ը.Միութիւնը պիտի փութայ դրապէս պատասխանել եւ ստարեկ ազգապահպանման այս խիստ կարեւոր եւ նուիրական սուրբ գործին :

Հայց Առաքելական Եկեղեցւոյ Միական Խորհուրդիս տարեկան մեծ պարահանդէսը տեղի ունեցաւ 22 Ապրիլ 1967ին քաղաքիս Վիթորիա Հոլի շքեղ սրահներուն մէջ եւ անոր հասոյթը, մտաւորապէս 2000 տոլար, տրամադրուեցաւ Եկեղեցւոյ վարչութեան պայման - քիւն :

Հ.Ե.Ե. Կազմակերպութեան հետ 13 Յոստոսին 1967 միասնաբար Միական Խորհուրդիս, տարեկան դաշտադնացութեան ներկայ եղան նաեւ մեր հայրենիքի մեծայարգ հիւրերը, որոնք հիւրաբար քաղաքս կը գտնուէին :

Հ.Բ.Ը.Միութեան 53րդ համագումարը տեղի ունեցաւ Յունիս 6, 7, 8 եւ 9, 1967, քաղաքիս շքեղ պանդոկներէն Երեւանի մէջ : Այս առթիւ քաղաքս ժամանակէն ի վեր թեմիս քարեխնամ առաջնորդ գերշ. Տ. Թորոսով եպս. Մանուկեան : Միական Խորհուրդս, Օգտուելով այս բացառիկ առիթէն, հանդիպում մը ունեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր հետ Երեւանի պանդոկին մէջ 6 Յունիս 1967 : Այս հանդիպման ներկայ կը գտնուէր նաեւ վաչէ Մ. վարդապետ Յովսէփեանը :

Այս հանդիպումի ընթացքին Միական Խորհուրդս տեղեկացաւ թէ Առաջնորդ Սրբազան Հայրը մասնաւոր կարգադրութեամբ Գանատայի Առաջնորդական փոխանորդ նշանակած էր վաչէ Մ. վարդապետ Յովսէփեանը, որ մտնուէր պիտի ստանձնէր իր պաշտօնը : Խորհուրդիս անդամները սրտի խորին գոհունակութեամբ դիմաւորեցին այս լուրը :

Եւ ահաւասիկ, յարգելի անդամները, այսօր վաչէ Մ. վարդապետ Յովսէփեան ստացած ըլլալով հայրապետական Օրհնութիւնները Ամենայն Հայոց Կաթողիկոս Վեհափառ Հայրապետին, Գանատայի Առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Վ. Եպիս. Յովսէփեան կը նախագահէ Մոնթրէալի Հայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ 1967ի տարեկան անդամական ընդհանուր ժողովին :

Առաջնորդական փոխանորդ գերշ. Տ. Վ. Եպիս. Յովսէփեան պաշտօնապէս քաղաքս այցելեց 9 Դեկտեմբեր 1967 Շաբաթ կէսօրէ վերջ ժամը 2ին :

10 Դեկտեմբեր 1967, յաւարտ Ս. Պատարագի, Միական Խորհուրդս ընդունելութիւն մը սարքեց ի պատիւ Սրբազան Հօր, քաղաքիս Պարթէյ պանդոկին մէջ : Այս ընդունելութեան ընթացքին ուրախութեամբ լսեցինք Առաջնորդական փոխանորդ Սրբազան Հօր յայտարարութիւնը, թէ Գանատայի Հայոց Առաջնորդարանը կը հաստատուի Մոնթրէալի մէջ : Այս առթիւ Միական Խորհուրդս, ի դիմաց մեր բարեպաշտ եւ հաւատացեալ ժողովուրդին անգամ մը եւս կը շնորհակտութեամբ Սրբազան Հօր պաշտօնը եւ յաջողութիւններ կը մաղթէ անոր նորանոր գործունէութեանց մէջ :

24 Դեկտեմբեր 1967, Ս. Ստեփանոսի Տօնը, որ հռչակուած է Սարկաւազաց եւ Դպրաց Օր, Միական Խորհուրդս մտերմիկ հաւաքոյթ մը կազմակերպած էր շէնքիս սրահին մէջ ի պատիւ Կոմիտաս Դպրաց Դասիս ժրջան եւ ազգագուտ գործունէութեանց համար : Միական Խորհուրդս կուգայ իր մասնաւոր շնորհակալութիւնները յայտնել Կոմիտաս Դպրաց Դասու բոլոր անդամներուն անխտիր, որոնք սիրալոյսով եւ ներդաշնակերպով մասնակցեցան մեր հոգեպարար երգեցողութեանց :

7 Յունուար 1968, յաւարտ Ս. Պատարագի, որուն ներկայ էր հաւատացեալ հոծ բազմութիւն մը, տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Մ.ի հետադժուիչներու դրօշակի Օրհնութեան եւ երջման մասնաւոր արարողութիւնները : Կը շնորհակտութեամբ Հ.Ս.Ը.Մ.ի

Վարչութիւնը եւ այն ազգայինները որոնք փայլուն գաղափարը ունեցան հիմ
նելու Հ.Ս.Ը.Մ.Ս.Ս. Մոնթրէալի գաղութի մէջ: Վստահ ենք թէ անոնք եւս կ'աշ
խատին Հայ Եկեղեցւոյ պայծառութեան եւ ազգապահպանման սուրբ գործին հա
մար :

Այս տարեշրջանին Միսական Խորհուրդս յաջողեցաւ նաեւ վերակազմել
Հայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Տիկնանց Սիովոսթիւնը որուն անդամական անդը
րանիկ ժողովը տեղի ունեցաւ 8 Փետրուարին, 1968, ՀԱՅ ՏՈՒՆԻ մէջ :

Վերջերս Առաջնորդարանէ Խորհուրդիս տեղեկացուած է թէ Մայր Տաճարի
Օթման առթիւ Ամերիկա պիտի այցելէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց
Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետին այս Օրհնաբեր այցելութեան առթիւ որոշ
ուած է նաեւ հայրապետական այցելութիւններ կարգ մը ծուխերու, ինչպէս նաեւ
Մոնթրէալի ծուխը, յառաջիկայ Մայիս ամսուան ընթացքին:

Միսական Խորհուրդս մեծ հրճուանքով կ'արձանագրէ Վեհափառին այցելու
թեան լուրը իր տարեկան տեղեկատուութեան մէջ :

Յարգելի անդամներ, ինչպէս ըսած էինք մեր տեղեկատուութեան սկիզբը,
թէ Միսական Խորհուրդս իր 1967 տարեշրջանին ունեցած գործունէութեան մէջ
չգործեց հրաշքներ եւ ոչ ալ տեսիլքներ, բայց հոս, հպարտութեամբ կ'ուզենք
յայտարարել, թէ ձեր Օրհնութեամբ եւ ձեր աշակցութեամբ, ան իրականացուց մեր
երկար տարիներէ ի վեր ունեցած երազին մէկ կարեւոր մասը: Ձեր արտօնու
թեամբ, Միսական Խորհուրդս գնեց Հանրի Պուրան եւ Համոն փողոցներուն ան
կիւնը գտնուող հողամասը որ, վստահ ենք թէ շատ մօտ ապագային, պիտի կ',ա
ռուցանենք հայկական կաթողիկէ մքրէթով Հայ Եկեղեցին, Հայ Դպրոցը եւ Մը
շակութային Կեդրոնը: Կը փախաքինք ձեր ուշադրութեան յանձնել, թէ եկեղե
ցաշինութեան հարցին շուրջ Միսական Խորհուրդիս պատրաստած մանրամասն
տեղեկատուութիւնը քիչ յետոյ պիտի ներկայացնենք ձեզի :

Ուրեմն յարգելի անդամներ, Միսական Խորհուրդոյ 1967 տեղեկատուու
թեան այս վերջին տողերուն կ'ուզենք հրապարակաւ մեր խորին շնորհակա
լութիւնները յայտնել Ս. Յովհաննէս Անկլիքան Եկեղեցւոյ հոգաբարձութեան
եւ հոգեւոր հովիւին որոնք սիրայօժար տրամադրեցին մեզի եկեղեցւոյ մա
տուրը, համայնքիս հոգեւոր հովիւ հոգ. Տ. Վազգէն վարդապետ Թադոյեանի,
Հ. Ե. Ե. Կազմակերպութեան, Եկեղեցաշինութեան Տիկնանց Օթմանակ Յանձնախումբին,
Խնամակալ Մարմնին, Կոմիտաս Դպրոց Դասին, Մամիկոնեան Մշակութային Յանձնա
խումբին, Կիրակնօրեայ Վարժարանի տնօրէն խորհուրդին, Սաթեան եւ Պէրպէրեան
երգչախումբերուն եւ մեր սիրելի Հաճի Մայրիկ Նազարեանին եւ այն ամէն
անդամին, իւրաքանչիւր անհատին, որոնք բարոյապէս կամ նիւթապէս աշակից
եղան մեզի ու աշխատեցան եւ գործեցին ի շահ եւ ի պայծառութիւն Հայց
Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ :

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներով .

ՄԻՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ատե նաղպիր

ԱԼԹԵՐ (ՄԱՐՏԻԿԵՆ)
[Handwritten Signature]